ՀԽՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ

Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստը (1989 թ. դեկտեմբերի 26) առանձնացավ իր նորույթի բովանդակությամբ։ Նիստում պատմաբանները հանդես եկան գիտահետազոտական ավարտված աշխատանքների արդյունքներն ամփոփող զեկուցումներով։ Միշոցառումը միանգամայն արդարացրեց իրեն և ավանդական դառնալու հայտ առաջադրեց, քանի որ նրանում ցուցադրվեցին գիտնականների լուրջ հետազոտություններին, մեթոդաբանական ճիշտ մոտեցումների, թարմ և հիմնավոր հարցադրումների արդյունքները, որոնք կարելի է գնահատել որպես պատմագիտության բնագավառում իրագործվող վերակառուցման անդրանիկ պտուղներ։ Դառնալով ավանդական, այդպիսի հանրագումարային նիստերը կօգնեն գիտական կոլեկտիվին ճշգրտելու գիտահետազոտական աշխատանքների հետագա ուղղությունները, ուշադրության առնելու բացթողումները, կատարելու ուժերի ճիշտ հաշվառում և տարի առ տարի հաղթահարելու պատմության սպիտակ բծերը, անհատի պաշտամունքի և լճացման տարիների այդ տխուր և ամոթալի ժառանգությունը։

Մեծ հետաքրքրություն առաջացրին հայ ժողովրդի դնագույն շրջանի պատմությանն առնչվող զեկուցումները։ Պատմական գիտությունների թեկնածու Հ. Մ. Ավետիսյանի զեկուցումը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանամերձ շրջաններում մ. թ. ա. XIII—VIII դդ. կազմավորված քաղաքական միավորումների պատմությանը։ Զեկուցողը ցույց է տալիս, որ խուրրիական Միտաննի-Խանիգալբատ թագավորության (մ. թ. ա. XVII—XIII դդ.) անկումից հետո, Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանամերձ շրջաններում ստեղծվում են արամեական անկախ իշխանություններ։ Քննարկելով արամեական ցեղերի առաջացման և տարածման հարցը, նա նշում է, որ չնայած արամեացիների անվանը ձևով նման տերմիններ են հանդիպում դեռևս մ. թ. ա. III հազարամյակի արձանագրություններում, սակայն դրանք բովանդակությամբ իրար չկրկնող և արամեացիների հետ կապ չունեցող տերմիններ են։ Արամեական ցեղերը առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա. XIV դ. կեսերին Բաբելոնից դեպի արևմուտք ընկած շրջաններում, սկզբից «Ախլամու», իսկ այնուհետև նաև «Արամու», «Արիմեա կամ «Արամու», «Արամեա» անվամբ։ Արամեական ցեղերը աստիճանաբար հարավից շարժվում են դեպի հյուսիսային Սիրիա, միանալով սեմական այլ ցեղերի։ Մ. թ. ա. XIV դ. վերջում Կադմուխի երկիրը, ապա Միտաննի թագավորությունը, Ասուրնասաանի դեմ պայքարելու նպատակով, դիմում են արամեական ցեղերի ռազմական օգնությանը։ Այս հանգամանքը, նշում է զեկուցողը, հնարավորություն տվեց արամեական քոչվոր ցեղերին տարածվելու Հյուսիսային Միջագետքում և այնուհետև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում։

Հ. Ավետիսյանը նշում է, որ դեռևս XI դ. սկզբին Հայկական լեռնաշխարհում հիշատակվում են արամեական ռազմական համբարներ։ Գոյություն ունեն լեռնաշխարհի և սեմական-արամեական ցեղերի, ինչպես նաև հնդեվրոպացի մուշքերի, կասկերի, ուրումնացիների համատեղ ապրելու և Ասուրեստանի դեմ միասնական ուժերով պայքարելու փաստեր։ Հանգամանորեն անդրադառնալով լեռնաշխարհի հարավային սահմանամերձ շրջաններում ստեղծված քաղաքական միավորումների պատմությանը, զեկուցողը նշում է, որ արամեական ցեղերը անցնելով նստակյաց կյանքի, աստիճանաբար այստեղ ստեղծում են մի շարք իշխանություններ՝ Թեմաննյան կամ Խանիգալբատյան, Բիթ-Բախիանի, Բիթ-Խալուպե, Բիթ-Ադինի, Բիթ-Զամանի և այլն։ Նա ներկաների ուշադրությունը հրավիրում է արամեական իշխանությունների՝ Ասուրեստանի դեմ շուրջ երեք դար տևած պայքարի վրա, ցույց տալով, որ այդ համառ ու երկարատև պայքարը անուղղակիորեն կասեցրեց ասուրեստանցիների ներթափանցումը Հայկական լեռնաշխարհի խորքը և դրանով համեմատաբար խաղաղ պայմաններ ստեղծեց լեռնաշխարհի ցեղերի, քաղաքական միավորումների զարգացման ու կազմավորման համար։

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Խաչատրյանի զեկուցումը վերաբերում էր Հայասա երկրի տեղագրության և էթնոսի հարցերին։ Տեղագրական նոր փաստերի հիման վրա հետազոտողը ձգտեց ցույց տալ Հայասա երկրի ընդգրկած տարածքը։ Հայասայի Ադի նահանգը, որը խեթական սեպագիր աղբյուր-

ները։ Հանդես է գալիս Հայասա անունով, ընդգրկել է Ճորոխ գետի ավազանը։ Դա հաստատվում է նրանով, որ Ազիի Ինգալավա քաղաքը տեղադրվում և անունով նույնանում է Ճորոխի ստորին հոսանքի ավազանի Նիգալ գավառի հետ (Ինգալ դրափոխված ձևին խեթերը ավելացրել են իրենց լեզվի-ավա ածանցը)։ Ազիի Ուրա քաղաքը տեղադրմամբ նույնանում է Բաբերդի շրջանի հայկական Ուռեն բնակավայրի հետ։ Ազի տերմինը պահպանվել է հայկական Ազորդ գավառի անվան մեջ և այլն։

Բարձր երկիրը համընկնում է Բարձր Հայքի հետ, որը հաստատվում է այդ երկրի Արմիյա, Կանուվարա, Բիթեյարիգա, Կումախա և Խախա բնակավայրերի տեղադրությամբ, որոնք նույնական են միջնադարի հայկական համապատասխան Արծն, Կան, Բթայառիճ, Կամախ և Խախ տեղանունների հետ։

Պախուվա նահանգը տեղադրվում է պատմական Հայաստանի Մնձուր և Խորձեանք գավառների տեղում և անունով նույնացված է ուշ ժամանակների Պախ (հայկական Պահ-Առկան) բնակավայրի հետ։ Նրա Արխիտա քաղաքի անվանումը Խորձեանքի սահմանագլխի պատմական Հայաստանի Երեզ բնակավայրի անվան խեթերեն թարգմանությունն է։

Ծուխմա նահանգն ընդգրկել է Բյուրակն լեռները և նրան հարակից շրջանները։ Անունով այն նույնանում է նշված լեռների շրջանի Ծխանիստ հայկական տեղանվան հետ (-մա-ն խեթերեն ածանց է)։

Իսուվա նահանգը անտիկ աղբյուրների Ծոփենեն, հայկական Ծոփքն է։ Նշված նահանգները խեթական սեպագիր աղբյուրներում ներկայացված են որպես Հայասա երկիր, որի էթնոսը խեթերը որոշակի դանազանել են ինչպես խուռիականից, այնպես էլ խեթականից։ Հայասայի տեղանունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երկրի էթնոսը հայկական է։

Բանասիրական գիտությունների թեկնածու **Մ. Մխիթարյանը** գիտական խորհրդին ներկայացրեց արևելահայ մամուլի սկզբնավորման պատմությունն ընդգրկող իր հետազոտության արդյունքները։ Նա բնութագրեց «Արևելյան ծանուցմունք» (Աստրախան. 1816), «Կովկաս» (Թիֆլիս, 1846—1847) և «Արարատ» (Թիֆլիս, 1850—1851) շաբաթաթերթերը, վեր հանեց նրանց դերը անցյալ դարի 40—50-ական թթ. հայ լուսավորական շարժման մեջ։ Զեկուցողը միաժամանակ անդրադարձավ Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի՝ կրթամշակութային օջախների գործունեությանը հայ մտավորականության նոր սերնդի դաստիարակության գործում, որը հետագայում, ի թիվս այլ բնագավառների, համալրեց հայ լրագրողների շարքերը։ Այնուհետև Մ. Մխիթարյանը ներկայացրեց Ս. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի նախահյուսիսափայլյան փուլի գործունեությունը և պարզաբանեց 1860-ական թթ. գաղափարական մեծ բանավեճի ակունքները։

Անցյալ դարի 70—80-ական թթ. հայ հասարակական հոսանքների գաղափարական պայքարում Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» դերի բացահայտմանն էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու **Լ. Գևորգյանի** զեկուցումը։ Նա նշեց, որ «Մշակի» հրատարակումը շրջադարձային երևույթ էր հայ մամուլի պատմության մեջ, որը սրեց և բևեռացրեց գաղափարական պայքարը, առաջադրելով բուրժուական բարեփոխումների իր ծրագիրը և կտրուկ հայտարարելով իր դարն ապրած հին հաստատություններին ու մտածողությանը։ Տեղի էր ունեցել ուժերի հետաքրքիր «զորահավաք». «Մշակի» գաղափարական ճակատում դիտարկելի է լիբերալ և դեմոկրատ գործիչների ժամանակավոր դաշինքի պատմական իրողությունը, որն իր ցայտուն արտահայտությունն է գտել Արծրունի-Րաֆֆի փոխհարաբերություններում։ Րաֆֆու հրապարակախոսությունը «Մշակում» հատկանշում է ոչ միայն թերթի, այլև ժամանակի առաջադիմական գաղափարախոսության բարձրակետը, որը հասավ մինչև հեղափոխական-դեմոկրատական հայեցության։ Տասնչորս տարվա բեղմնավոր աշխատակցությունից հետո Րաֆֆու՝ «Մշակից» հեռանալու փաստի մեջ մամուլի պատմության ուսումնասիրողը տեսնում է հասարակական հոսանքների պատմական դարգացման օրինաչափության դրսևորում։

Լիբերալ «Մշակի» և ազգային-պահպանողական ուղղության «Մեղու Հայաստանի», «Փորձ» և «Արձագանք» պարբերականների տեվական և սուր բանակռիվը զեկուցողը բնութագրում է որպես բուրժուական գաղափարախոսության երկու տարատեսակությունների պայքար, որը հակառակ երևութական անհաշտելիությանը, ի վերջո հանգելու էր տեսակետների մերձեցման։ Կյանք մտնելով «Հյուսիսափայլ» ամսագրի «կրիտիկական ոգին» շարունակելու և Նազարյանցի ու Նալբանդյանի գաղափարական ժառանգորդը լինելու հայտով, «Մշակը» հակաֆեոդալական ուղղվածությունը ընտրեց որպես իր պարզած դրոշի հիմնական գույն, դարձավ քաղաքակրթության պատգամախոսը մեզանում։ Ազգային-պահպանողականները նախանձախնդիր էին անցյալի ժառանգությունը նորի մեջ ներառնելուն և դրանով ազգային դիմագիծը պահպանելուն։ Որքան կարևոր էր նորը գտնելը, նույնքան կա-

բևեռ էր արժեքավոր հինը լկորցնելը։ Ինչ անգիտանում էր «Մշակը», ազգային-պահպանողականների փայփայանքի առարկան էր։ Այսպիսով, եզրակացնում է զեկուցողը, արտահայտելով զարգացման երկու հակագրամիասնական կողմերը, հոսանքների գոյությունը պատմականորեն արդարացված ու անխուսափելի էր, և նրանց պայքարը կազմում էր հասարակական զարգացման բովանդակությունը, առաջմղիչ ուժը։ Սակայն նրանք որքան էլ տարամիտվեին, ազգի բուրժուական զարթոնքը նրանց միասնական նպատակակետն էր, հաշտեցման հանդիպավայրը։

1920—1980 թթ. գյուղում կենսագործվող ագրարային քաղաքականության ուսումնասիրմանն էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Գ. Գեղամյանի զեկուցումը։ Անդրադառնալով նախախորհրդային Հայաստանի գյուղացիության ծանր վիճակին, նա նշեց, որ մաքառելով հանուն իր ֆիզիկական գոյության, գյուղացիությունը չէր կարող ակտիվ պայքար մղել խորհրդային կարգերի հաստատման համար։ Գրականության մեջ մինչև այժմ այս հարցը սխալ է մեկնաբանված և հիմնավորված չէ գյուղացիության հեղափոխական պայքարի թեզը։ Հայ գյուղացիությունը անկեղծորեն ողջունեց նոր հասարակարգի ծնունդը, նրա մեջ տեսնելով խաղաղ աշխատանքի, ազգային և սոցիալական վերածննդի հեռանկարները։ Սակայն համաշխարհային հեղափոխության շուտափույթ հաղթանակի ուտոպիական ծրագրերը բացասական ազդեցություն ունեցան ինչպես Ռուսաստանի, այնպես էլ մեր հանրապետության աշխատավորության վրա։ Այն հիմնականում արտահայտվեց ռազմական կոմունիզմի կենսագործման մեջ։ Հայաստանի նորահայտ իշխանությունը, առանց հաշվի առնելու կոնկրետ պայմանները, մեխանիկորեն կիրառեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Այս հարցի նորովի ուսումնասիրությունը հնարավորություն կտա նոր տեսանկյունով մեկնաբանելու նաև քաղաքացիական կռիվների պատմությունը, քանի որ այս պրոբլեմները սերտորեն առնչվում են միմյանց։

1920-ական թվականներին գյուղում կենսագործելով նեպը (զեկուցողի կարծիքով՝ հարկադրված էին անցնելու այդ քաղաքականությանը), որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին տնտեսության վերականգնման, կոոպերացիայի արմատավորման և այլ բնագավառներում։ Նեպով աջակցված տնտեսությունը ոչ մի վտանգ չէր ներկայացնում կապիտալիզմի վերականգնման համար. մանր արտադրությունը և սոցիալիզմը իրար բացառող կոնցեպցիաներ չեն, ընդհակառակը, հաջողությամբ կարող են լրացնել միմյանց։ Սակայն Ստալինը շուտով հրաժարվեց նեպից և նորից կյանքի կոչեց ռազմական կոմունիզմի սկզբունքները՝ բռնությունն ու կամայականությունը։ Համատարած կոլեկտիվացման ժամանակ գյուղի լավագույն աշխատավորի ոչնչացումը հանցագործություն էր գյուղացիության նկատմամբ։ Դա գյուղացիության յուրահատուկ պայմաններով ճորտացման նոր քաղաքականություն էր, որի վնասակար հետևանքները դգացվում են մինչև այսօր։ Այս բարդ և հակասական պրոցեսը նույնպես հավուր պատշաճի չի ուսումնասիրվել։ Ինչպես կուսակցության ագրարային քաղաքականությունն էր վերածվում առանձին կամպանիաների, այնպես էլ այդ քաղաքականության ուսումնասիրությունը։ Այժմ, վերակառուցման արդի փուլում ագրարային քաղաքականության հիմքում պետք է դնել հողը աշխատավոր գյուղացիություն բաժանելու սկզբունքը։ Երբ գյուղացին դառնա սեփականատեր, կվերանա նրա հյուր քամող բոլոր տեսակի ղեկավարների ու մասնագետների անհրաժեշտությունը, որոնք այժմ բոլոր միջոցներով խանգարում են արմատական միջոցառումների կենսագործմանը։

Խորհրդային պատմաբանները պետք է խոր և բազմակողմանի ուսումնասիրեն և նորովի շարադրեն մեր հանրապետության գյուղի և գյուղացիության պատմությունը։

Պատմական գիտությունների թեկնածու Գ. Մախմուրյանը զեկուցեց «XX դ. սկզբի հայ մշակույթը արդի ամերիկյան պատմագրության մեջ» թեմայով։ Նա ներկայացրեց Ռ. Միրակի, Ռ. Հովհաննիսյանի, Մ. Սարկիսյանի, Լ. Նալբանդյանի, Մ. Մաթոսյանի, Ջ. Բարտոնի, Մ. Սեչերի, Հ. Դեվիսոնի և այլ մասնագետների մենագրությունները։ Բնութագրելով ամերիկյան արխիվային ֆոնդերը, նա առանձնացրեց ամերիկյան Ազգային արխիվը (Վաշինգտոն), Հայաստանի հանրապետության արխիվը (Բոստոն), ինչպես նաև ամերիկյան միսիոներների խորհրդի 1900—1914 թթ. տարեկան զեկուցագրերը։ Նշվեց, որ ամերիկյան պատմաբանները լայնորեն օգտագործում են խորհրդահայ մասնագետների հետազոտությունները։

Զեկուցողը ընդգծեց, որ ամերիկյան մշակութաբանության մեջ առկա են մեթոդական յուրահատուկ մոտեցումներ։ Եթե խորհրդային պատմագիտության մեջ մշակույթը ներկայացվում է որպես մեկուսացված դպրության, գրականության, արվեստի կամ հասարակական մտքի նկարագրություն, ապա ամերիկյան գիտնականները աշխատում են մշակույթը դիտարկել որպես ազգային ֆենոմեն, որի կարևոր մասերն են ազգային ավանդույթը, մասսայական և էլիտար մշակույթները։ Հետազոտության-

սուրյեկտ է դառնում առանձին շարքային մարդ։ Մշակույթի զարգացումը գնահատվում է ոչ թե տաղանդների «հաշվառումով», այլ քաղաքակրթության աստիճանը բնութագրող վիճակագրական տվյալներով։

XX դ. սկզբի հայ մշակույթի ամերիկյան հետազոտողները, մասնավորապես սիյուռքահայ գիտնականները, առավել ուշադրություն են դարձնում հետևյալ պրոբլեմներին. Արևմտյան Հայաստանի մշակութային զարգացման ընթացքը, ցեղասպանության կործանարար ազդեցությունը նրա վրա, հայ եկեղեցու դերը մշակույթի զարգացման գործում։ Արևելյան Հայաստանի մշակույթը նրանք ուսումնասիրում են ռուսական մշակույթի ազդեցության շրջանակներում։ Առանձնահատուկ ուշադրության է արժանանում Հայաստանի հանրապետության մշակութային քաղաքականությունը, նրա նախաձեռնությունները հայոց լեզվի պետական ստատուսի հաստատման, ժողովրդական կրթության սիստեմի ստեղծման, պետական թանգարանի, թատրոնի, համալսարանի հիմնադրման և այլ ուղղություններով։ Հետազոտողների ճնշող մեծամասնության եզրակացությունն այն է, որ հայ մշակույթը XX դ. առաջին տասնամյակներում ապրել է վերածնունդ։ Նրանց եզրակացությունները և շրջանառության մեջ դրված փաստական նյութը արժանի են ամենայն ուշադրության։